

ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ «ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ ՎԱԽՃԱՆԸ» ՀՈԴՎԱԾԻ ԱՌԹԻՎ

Հրապարակում, Երիտթուրքական հեղափոխություն, Հայոց Մեծ եղեռն, ցեղասպանություն, ոճրագործ, իմպերիալիստական պատերազմ, բռնակալ, դատավճիռ, պարտություն

Պետական-քաղաքական և ռազմական ականավոր գործիչ, նշանավոր հրապարակախոս ու գրականագետ Ալեքսանդր Ֆեոդորի Մյասնիկյանը (Մյասնիկով, 1886–1925) Անդրֆեդերացիայի գործկոմի նախագահ եղած ժամանակ Թիֆլիսում առաջիններից մեկն է եղել, որ ստացել է երիտթուրքական շարժման պարագլուխներից և Հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչներից ու գլխավոր հանցագործներից մեկի՝ Էնվեր փաշայի սպանության լուրը: Այդ տեղեկությունն առնելուց մեկ օր չանցած նա հոդվածով հանդես է եկել «
» թերթի 1922 թ. օգոստոսի 23-ի N 55-ում, որտեղ հակիրճ, բայց և դիպուկ կերպով տվել է հայ ժողովրդի երդվյալ թշնամու (և ոչ միայն նրա) կյանքի ու արկածախնդիր գործունեության սպառիչ բնութագիրն ու քաղաքական գնահատականը:

Նախ հարկ է նշել, որ Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից և Օսմանյան կայսրության փլուզումից հետո նրա ռազմական նախարար և «իթթիհատական» կուսակցության պարագլուխ Էնվեր փաշան փախել է Գերմանիա ու այնտեղից կապեր հաստատել Խորհրդային Ռուսաստանի ղեկավար շրջանների հետ: Նա, որպես պատերազմի հանցագործ և Հայոց ցեղասպանության կազմակերպիչ, Թուրքիայի ռազմական դատարանի կողմից 1919 թ. հեռակա կարգով դատապարտվել էր մահվան: Գերմանիայից Էնվերը անցել է Մոսկվա և ներկայացել որպես Խորհրդային կարգերի համակիր ու կողմնակից, որի համար նրան տրվել է ապաստան: Իսկ 1920 թ. ամռանը ուղարկվել է Բաքու՝ մասնակցելու Արևելքի ժողովուրդների համագումարին: Այդ ընթացքում իր գաղտնի ծրագրերն իրականացնելու նպատակով մի կարճ ժամանակով նա լինում է նաև Բաթումում: Արևելքի ժողովուրդների համագումարին մասնակցելուց հետո, տեսնելով, որ Անդրկովկասում իր գործնության համար չկան նպաստավոր պայմաններ, 1920 թ. աշնանը ճողոպրում է Միջին Ասիա, «որտեղ օգտագործում է Թուրքեստանյան ճակատի հրամանատարության վստահությունը, զինվում անհրաժեշտ տվյալներով և... անցնում բարիկադի այն կողմը՝ բասմաչների բանակը, ուր նրան սպասում էին օրեցօր»¹: Այնտեղ նա կազմակերպում է, այսպես կոչված, «իսլամի բանակը», որի մեջ միավորում է շուրջ 20 հազար բասմաչների, իսկ 1922 թ. սկզբներին Ֆերգանայի և Բուխարայի շրջաններում նրա հրամանատարության տակ արդեն կար ավելի քան

¹ Մնացականյան Ա., Հոկտեմբերի բարիկադների վրա, Երևան, 1967, էջ 202:

50 հազար բասնաչ¹: Այդ զորամիավորումների հրամանատարներ են նշանակվում Օսմանյան բանակի նախկին բարձրաստիճան սպաներից մի քանիսը: 1922 թ. գարնանը նրա զորամասերը գրավում են Բուխարայի ժողովրդական խորհրդային Հանրապետության տարածքների մի զգալի մասը: Իր այդ «հաջողություններով» ոգևորված՝ նա 1922 թ. մայիսին վերջնագիր է ներկայացնում Մոսկվա՝ խորհրդային կառավարությանը, պահանջելով 15 օրվա ընթացքում Միջին Ասիայից դուրս բերել կարմիր բանակի զորամիավորումները և իրեն ճանաչել որպես իր իսկ կողմից հռչակված Թուրքեստանի իսլամական պետության ղեկավար: Նրա նպատակն էր Մեծ Թուրանի ստեղծումը:

Էնվերի բանակի դեմ մղվող մարտերը ղեկավարում էր Թուրքեստանյան ռազմաճակատի առանձին հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մելքունովը (Մելքունյան, 1885-1962): Նրա հրամանատարությամբ գործող հեծելազորը 1922 թ. օգոստոսի 4-ին, Բուխարայի մոտ մղված մարտերի ժամանակ, Կոնֆրունդ ղշլաղում կարողացել է հմտորեն կազմակերպել Էնվերի բանակի շրջապատումն ու գլխովին ջախջախումը, որտեղ և թուրք մեծ ռճրագործին փախուստի ժամանակ, սահմանն անցնելու պահին, դիպուկ կրակոցով զետեմին է տապալել Հ. Մելքունովի քաջարի հեծյալներից մեկը: 1922 թ. օգոստոսի 6-ին Էնվերի հրոսակախմբի մնացորդներն իրենց հրամանատարի մարմինը թաղում են լեռնային Աբդերյա առվում և հուսալքված, մանր ջոկատներով անցնում Աֆղանստան²: Ահա այսպիսի անփառունակ ավարտ է ունենում երիտթուրք պարագլուխներից մեկի արկածախնդրական կյանքը:

Էնվերի սպանության լուրը, շուրջ 20 օր անց, հասել է Թիֆլիս, Ալ. Մյասնիկյանին, և նա օգոստոսի 23-ին արդեն հոդվածով հանդես է եկել թերթում, որը կրում է «Էնվեր փաշայի վախճանը» վերտառությունը: Այն պատկանում է Ալ. Մյասնիկյանի քիչ հայտնի հոդվածների թվին, որը, տպագրվելուց հետո, 43 տարի անց, զետեղվել է նրա Ընտիր երկերի ռուսերեն հրատարակության մեջ (տես . . . (. . .), . . . , . . . « . . . », 1965, էջ 416-417), որից հետո այլևս հեղինակի ոչ մի ժողովածուում, այդ թվում և Երկերի հինգհատորյակում, չի ընդգրկվել և նույնիսկ հայերեն չի թարգմանվել: Դրա մասին ոչ մի տեղեկություն չենք գտնում նաև Ալ. Մյասնիկյանի երկերի մատենագիտության (տես Ալ. Մյասնիկյան, Բիբլիոգրաֆիա, խմբագրությամբ և առաջաբանով Արտ. Ոսկերչյանի, Երևան, 1956, 150 էջ) մեջ:

Ըստ երևույթին, դրա պատճառը խորհրդային Միության և Թուրքիայի միջև հետագայում ստեղծված բարիդրացիական հարաբերություններն են եղել: Իսկ Ալ. Մյասնիկյանի հայրենաշունչ ոգով գրված այդ հոդվածում, ինչպես տեսնում ենք, անարգանքի սյունին են գամված երիտթուրքական հեղափոխության չորս պարագլուխները (Թալեաթ փաշա, Բեհաեդդին Շաքիր, Ջեմալ փաշա և Էնվեր փաշա), որոնք դարձան ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներն ու իրագործողները:

¹ Նույն տեղում, էջ 206:

² Մաղալեան Ա., Հայ զորահրամանատարները պանթուրքիզմի Միջինասիական ճակատում, «Դրօշակ», 2002, N 4, էջ 79:

Հեղինակն իր հողվածում խոսելով Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի մասին՝ հավատում է Թուրքիայի աշխատավորության հաղթանակին: Ռա այն ժամանակ ընդունված ընդհանուր գաղափարախոսություն էր ու քարոզչություն, որից, բնականաբար, չէր կարող գերծ մնալ Ալ. Մյասնիկյանը: Ուստի, նա խստագույնս դատապարտում է հին Թուրքիային ու նրա ոճրագործ պարագլուխների հանցագործությունները և հավատում է նոր, «երիտասարդ, պայքարող և բարձրացող» Թուրքիայի ու գտնում, որ «մուսուլմանական Արևելքի փրկությունը և ընչազուրկ Թուրքիայի ազատությունը» կախված է Ռուսաստանի հեղափոխությունից: Սակայն բանիմաց և լայնախոհ ընթերցողը այդ հողվածում կնկատի նաև, որ Ալ. Մյասնիկյանը այնքան էլ ոգևորված չէ «երջանիկ» Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի ազգային շարժման հաջողություններով, որը շուտով մի նոր աղետ բերեց հայ ժողովրդի գլխին՝ Արևելյան Հայաստանում ևս սկսելով նոր եղեռն: Այս ամենով հանդերձ, ներկա հողվածում դժվար չէ նկատել Ալ. Մյասնիկյանի խոր հայրենասիրությունը և ատելությունը հանցագործ Թուրքիայի և նրա պարագլուխների նկատմամբ:

Ալ. Մյասնիկյանի ստորև ներկայացվող հողվածը մեր կողմից ռուսերենից ամբողջությամբ առաջին անգամ է թարգմանվում և տպագրվում հայերեն: Կարծում ենք, սույն հողվածի հրապարակումը Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակի նախօրյակին, կարևոր դեր կունենա XX դարասկզբին Թուրքիայում իրականացված և իր նախադեպը չունեցող մեծագույն ոճիրի գլխավոր հանցագործներից մեկի՝ Էմվեր փաշայի դիմակի քողագերծման և պատմության դատաստանի առջև կանգնեցնելու գործում:

Վ.ԱՂԻՍԻՐ ՍԱՂԱԼՅԱՆ

ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ ՎԱԽՃԱՆԸ

Երեկ գիշերը մեզ լուր հասավ Էմվեր փաշայի սպանության մասին: Գիշտ է, այդ տեղեկությունը ստացվել է ոչ պաշտոնապես հաստատված աղբյուրից, այլ հեղինակավոր զինվորական շրջանակներից (ցավոք, Էմվերին ջաղջախած կարմիրբանակային զորամասում չի եղել ոչ մի լուսանկարչական ապարատ, որ հնարավոր լիներ պատկերելու բասմաչների սպանված հերոսի դին), բայց և այնպես, մենք անհրաժեշտ ենք համարում տալ երիտթուրքական շարժման մոհիկաններից վերջինի անձի գնահատականը:

Չկա այլևս վերջին խոշոր երիտթուրքը: Սպանվեց ավանտյուրիստական, իմպերիալիստական և ռազմաչինովնիկական Թուրքիայի գլուխն ու ոգեշնչողը: Թալեաթ փաշա, դոկտոր Բեհաեդդին Շաքիր, Ջեմալ փաշա և Էմվեր փաշա, – ահա այն բարձրագույն և երբեմնի հպարտորեն հնչած անունները, որոնք մեկը մյուսին հաջորդելով այնպես անփառունակ և այնպես ողբերգականորեն իջան գերեզման: Նրանցից ոմանց տապալել է հայ ազգայնական վրիժառուի գնդակը, իսկ մյուսները դարձել են իրենց կարճատես ու թեթևամիտ քաղաքականության զոհը:

Էնվեր փաշային պետք է համարել հին, արյունարբու Թուրքիայի ականավոր պետական գործիչներից մեկը: Հետևեցեք այդ մարդու քաղաքական վերընթացի պատմությանը՝ 1908 թ. երիտթուրքական «հեղափոխությունը» Էնվեր-բեյի գլխավորությամբ, Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմները Էնվերի ղեկավարությամբ, Թուրքիայի ազգային փոքրամասնությունների բնաջնջման համար կազմակերպված հոծ արյունահեղություններով ընթացող ջարդերն ու կոտորածները՝ երիտթուրքերի դիվանագիտական բառազեղումների նվազակցության ներքո և, իհարկե, կառավարիչ Էնվերի օրհնությամբ ու համաձայնությամբ, իմպերիալիստական պատերազմը և հայ ժողովրդի ոչնչացումը Էնվեր փաշայի բարձր հովանավորությամբ, թուրքական կայսրության պարտությունը և բաժանումը, Էնվերի փախուստը Գերմանիա, Էնվերը Ռուսաստանում և Բաթունում, որտեղ նա սպասել է մինչև նոր, Մուստաֆա Քեմալի մարտական ազգային շարժումը չփլուզվի, և նա՝ Էնվերը, «երջանիկ» Քեմալի տեղը չզբաղեցնի: Եվ քանի դեռ իսպառ չի այրվել նրա այդ երազանքը, մեր հերոսը, հեղափոխական Ռուսաստանից հիասթափված, դավաճանաբար ցատկել է հակառակ կողմը: Նա ճողոպրել է Բուխարա և այնտեղ ապստամբության դրոշ բարձրացրել խորհրդային վարչակարգի դեմ: Եվ այնտեղ էլ նրա նպատակը նույնն է եղել՝ զբաղեցնել Բուխարայի և Թուրքեստանի կառավարչի դիրքը, իսկ այնուհետև՝ ամբողջ մուսուլմանական աշխարհի: Նա դարձել է հին, թշվառ ու դժբախտ Թուրքիայի կողմը, և չի հասել իր նպատակին, որովհետև պատմության տրամաբանությունը ավելի ուժեղ է արկածախնդիրների տրամաբանությունից, թեկուզև խելքով, կամքով ու քաջությամբ անսահման ուժեղ բախտախնդիրների, ինչպիսին Էնվերն էր:

Ի՞նչ կարող է և պետք է ասի արթնացող Արևելքը Էնվերի թարմ շիրմի առաջ: Ինչպե՞ս կվերաբերվեն Էնվերի կործանմանը երիտասարդ, պայքարող և բարձրացող Թուրքիան, Անգորական Թուրքիան: Նրանք կանցնեն նրա շիրմի կողքով հանգիստ, կանցնեն ամուր և լուսավոր այն հավատով, որ մուսուլմանական Արևելքի փրկությունը և ընչազուրկ Թուրքիայի ազատությունը ընթանում են ոչ թե Էնվերների, այսինքն՝ ոչ թե հների, մեզ ծանոթ բռնակալների, սմանկացած Խալիֆաթի, այլ՝ ընդհակառակը, դրանք կախված են այն հեղափոխությունից, որը ներկայումս գերիշխում է Ռուսաստանում ու Ասիայի մի շարք վայրերում և որը վաղը կտարածվի աշխարհի մնացած մասերում: Դրանք կախված են արթնացող, իրենց հեղափոխությունների համար ճանապարհ հարթող Արևելքի ժողովուրդների համերաշխությունից ու եղբայրությունից:

Էնվերը վերջ ի վերջո դարձել էր խոչընդոտ այդ ճանապարհին, նա վերածվել էր մաքուր արկածախնդրի: Այդ պատճառով էլ սպանվեց, քանզի պատմությունը կերտվում է առանց բախտախնդրության:

Էնվերը սուր բարձրացրեց աշխարհում տեղի ունեցած մեծագույն հեղափոխության դեմ և ինքն էլ ընկավ սրից: Այդպիսին է պատմության արդարամիտ դատավճիռը,

բարեբախտաբար, արդեն անցյալի գիրկն անցած հին Թուրքիայի մեծագույն կազմալուծիչներից մեկի, տիպիկ բռնակալներից մեկի և ամենաձախորդ տիրակալներից մեկի նկատմամբ:

*23 օգոստոսի 1922 թ.
Թիֆլիս ԱԼ. ՄՅԱՆԻԿՅԱՆ*

Վլադիմիր Մաղալյան, Ալ. Մյասնիկյանի «Էնվեր փաշայի վախճանը» հոդվածի առթիվ – Առաջին անգամ է ռուսերենից հայերեն թարգմանվում Ալ. Մյասնիկյանի «Էնվեր փաշայի վախճանը» հրապարակումը, ուր տրված է երիտթուրքերի պարագլուխներից մեկի քաղաքական դիմանկարը որպես արևմտահայության Մեծ եղեռնի հեղինակ ու ոճրագործ:

Владимир Магальян, По поводу статьи «Конец Энвер-паши» Ал. Мясникяна – -

Vladimir Maghalyan, Apropos of the article: “The Death of Enver Pasha” by Al. Myasnikyan – Translated from Russian into Armenian for the first time, the present article by the prominent political and military figure Al. Myasnikyan, provides the political estimation of the adventurous and criminal actions committed by Enver Pasha - one of the leaders of the Young Turk movement who was among the organizers of the Armenian Genocide in the territory of Turkey and Western Armenia. The article also reveals the belligerent and anti-revolutionary nature of the rebellion in Central Asia fomented by Enver Pasha against Soviet Russia, and subsequently describes his infamous death.

Վլադիմիր Մաղալյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող

